

# Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ԵՎՐՈՊԱ-ԿՈՎԿԱՍ-ԱՍԻԱ ՄԻՋԱՆՑՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ԿՈՂՄ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՆ ԵՄ-ԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԱԾ ԲՈՒՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՆՈՐ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Եվրոպա-Կովկաս-Ասիա միջանցքի զարգացմանն ուղղված միջազգային տրանսպորտի մասին» հիմնական բազմակողմ համաձայնագրի (փոփոխությունների և լրացումների կատարում) 11-րդ հոդվածի (այսուհետ՝ Հիմնական համաձայնագիր),

հաշվի առնելով երկու Կողմերի՝ 2007 թվականի հունվարի 1-ին ԵՄ անդամ պետություններ դարձած Բուլղարիայի Հանրապետության և Ռումինիայի նոր կարգավիճակը,

Կողմերը Հիմնական համաձայնագրում և նրա տեխնիկական հավելվածում համաձայնեցին կատարել հետևյալ փոփոխությունները.

I. Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու ամսաթվից Բուլղարիայի Հանրապետությունն ու Ռումինիան չեն կիրառում հետևյալ դրույթները.

- «Եվրոպա-Կովկաս-Ասիա միջանցքի զարգացմանն ուղղված միջազգային տրանսպորտի մասին» հիմնական բազմակողմ համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության 2-րդ և 3-րդ կետերը (ստորագրվել է 2003 թվականին Հայաստանի Հանրապետությունում՝ Երևանում, ՏՐԱՍԵԿԱ Միջկառավարական հանձնաժողովի (IGC) III խորհրդաժողովում).
- «Եվրոպա-Կովկաս-Ասիա միջանցքի զարգացմանն ուղղված միջազգային տրանսպորտի մասին» հիմնական բազմակողմ համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության 4-րդ կետը (Եվրոպա-Կովկաս-Ասիա միջանցքում երկաթուղային փոխադրումներում «SMGS» երկաթուղային մուրհակի կիրառմամբ Հիմնական համաձայնագրի՝ տարանցիկ փոխադրման միջազգային մաքսային ընթացակարգերի մասին տեխնիկական հավելված)
- Հիմնական համաձայնագրի «Միջազգային ավտոմոբիլային ճանապարհներով փոխադրումների մասին» տեխնիկական հավելվածի 8-րդ հոդվածը.
- Հիմնական համաձայնագրի «Մաքսային ընթացակարգերի և փաստաթղթերի մշակման մասին» տեխնիկական հավելվածը:

II. Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու ամսաթվից Բուլղարիայի Հանրապետությունը չի կիրառում Հիմնական համաձայնագրի «Միջազգային երկաթուղային փոխադրումների մասին» տեխնիկական հավելվածի 2-րդ հավելումը:

III. Կողմերը համաձայնել են կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հիմնական համաձայնագրի 6-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը լրացնել նոր կետով, որը շարադրված է հետևյալ կերպ.

- «Հաշվի առնելով Բուլղարիայի Հանրապետության և Ռումինիայի անդամակցությունը ԵՄ-ին՝ այս դրույթները չեն կիրառվում նրանց կողմից Եվրոպական միության անդամ պետություններին կամ որևէ այլ երրորդ երկրի տրվող արտոնությունների նկատմամբ»:

2) Հիմնական համաձայնագրի «Միջազգային առևտրային ծովագնացության մասին» տեխնիկական հավելվածի 9-րդ հոդվածը լրացնել նոր՝ 4-րդ պարբերությամբ, որը շարադրված է հետևյալ կերպ.

«Հաշվի առնելով Ռումինիայի և Բուլղարիայի Հանրապետության անդամակցությունը ԵՄ-ին՝ սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում նրանց կողմից Եվրոպական միության անդամ պետություններին կամ որևէ այլ երրորդ երկրի տրվող արտոնությունների նկատմամբ»:

Հիմնական համաձայնագրի «Միջազգային երկաթուղային փոխադրումների մասին» տեխնիկական հավելվածի 1-ին հավելման 3-րդ կետում նշված «Բուլղարական պետական երկաթուղի ազգային ընկերություն» ձևակերպումը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Բուլղարիայի Հանրապետության տրանսպորտի նախարարություն»:

IV. Կողմերը համաձայնում են, որ Հիմնական համաձայնագրի այն Կողմերը, որոնք Եվրոպական միության անդամներ են, մասնակցեն Երոպա-Կովկաս-Ասիա տրանսպորտային միջանցքի հետագա զարգացմանը միայն այն դեպքում, եթե այն ամբողջովին համապատասխանում է Եվրոպական օրենսդրությանը:

Հիմնական համաձայնագրի և նրա տեխնիկական հավելվածի դրույթները չեն կիրառվի Հիմնական համաձայնագրի այն Կողմերի միջև, որոնք Եվրոպական միության անդամներ են:

Հիմնական համաձայնագրում և (կամ) նրա տեխնիկական հավելվածում հետագայում որևէ փոփոխություն կատարելու դեպքում սույն երկրներն իրավունք են վերապահում իրենց դիրքորոշումն արտահայտել յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար լրամշակմանը մասնակցելու վերաբերյալ: Տվյալ դեպքերում Հիմնական համաձայնագրի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված կոնսենսուսի նորմը չի կիրառվում որոշումներ ընդունելիս:

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Հիմնական համաձայնագրի 11-րդ (Փոփոխությունների և լրացումների կատարում) և 13-րդ («Ուժի մեջ մտնելը») հոդվածներին համապատասխան:

Սույն Արձանագրությունն ստորագրման համար բաց կլինի 2007 թվականի դեկտեմբերի 13-ին՝ Աստանայում, իսկ հետագայում՝ ՏՐԱՍԵԿԱ Միջկառավարական հանձնաժողովի մշտական քարտուղարությունում:

Կատարված է Աստանայում 2007 թվականի դեկտեմբերի 13-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերենով և անգլերենով, ընդ որում, երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալ պատվիրակությունների ղեկավարները կամ նրանց լիազորված ներկայացուցիչները ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Սույն Արձանագրությունն ստորագրվել է Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության, Բուլղարիայի Հանրապետության, Վրաստանի, Ղազախստանի Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության, Տաջիկստանի Հանրապետության, Թուրքիայի Հանրապետության, Ռումինիայի և Ուկրաինայի կողմից:

Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2010թ. ապրիլի 4-ին